

1-4. Ավայան

ՊԱՏՄԱ-ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՄԵԹՈԴԸ ԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ¹

«Լեզուն միջոց, գործիք է, որի օգնությամբ մարդիկ հաղորդակցվում են իրար հետ, փոխանակում մտքերը և հասնում փոխադարձ բարոնման»², — ասում է ընկեր Ստալինը: Իբրև այդպիսին նա ընդհանուր է ու միատնական՝ ամբողջ հասարակության համար: Լեզուների մեջ եղած բոլոր քերականական կատեգորիաները, նրանց արտահայտման միջոցները, նախադասության կառուցման սկզբունքները, բառակազմության միջոցներն ու եղանակները և այլն, ունեն մի շարք նմանություններ և ընդհանուր գծեր: Խիենույն ժամանակ, այս ընդհանրությունները յուրաքանչյուր լեզվում դրսևորվում են զանազան ձևերով ու յուրահատկություններով:³ Եվ սա ատրոփինակ է, քանի որ յուրաքանչյուր լեզու իր առաջացման ու զարգացման պրոցեսում ստեղծել է իրեն յուրահատուկ քերականությունը և բառարանային կազմը, որ ընդհանուր է նրանով խոսող հասարակության համար:

Սակայն անկարելի է մի անգամ խոսելու պրոցեսում դրսևորել այն ամենը, ինչ որ ունի որևէ լեզու: Խոսելը, խոսողության յուրաքանչյուր ակտը լեզվի ամբողջության մի մասնակի դործադրումն է միայն: Լեզուն ամբողջանում է հանրության խոսելու գործունեության անվերջ ու անընդհատ պրոցեսում, որի մեջ յուրաքանչյուր առանձին խոսողական ակտը հանդիսանում է ամբողջ լեզվական անվերջ շղթայի մի օղակը միայն: Իայց ինքը խոսքն էլ, որպես մի ամբողջական միավոր, զարձյալ իր մասերն ունի: Նա իր մեջ է առնում նախադասությունը, իսկ նախադասությունը՝ յուր անդամները, նախադասության անդամները՝ բառեր ու նրանց հարաբերություններն արտահայտող հատկանիշներ (մասնիկներ, շեշտ, դասավորություն և այլն) և այսպես անվերջ: Այս տեսակետից մոտենալով՝ տեսնում

¹ Տպագրվում է մտքերի փոխանակության կարգով:

² Ի. Ստալին, Մարքսիզմի վերաբերյալ լեզվաբանության մեջ, 1950 թ., էջ 46:

³ Անցյալ դարի լեզվաբան Վիլհելմ ֆոն Հումբոլդտը այդ մասին հետևյալ տեսակետն էր հայտնում. «Սի բանի լեզուների ձևերը կարող են համընկնել մի ընդհանուր ձևի, և բոլոր լեզուների ձևերն իսկապես մերձենում են մի ձևի, եթե ամենուրեք նկատի առնենք միայն նրանց ամենարդհանուր հատկությունները, այսինքն՝ պատկերացումների յուրահատկությունները և հարաբերությունները, որոնք անհրաժեշտ են բառակազմության ու շարահյուսության համար, արտաստական օրգանների միատեսակ կազմության: Լեզուների մեջ այնպես զարմանալիորեն համաեղված են նրանց անհատականությունը՝ նրանց միջև եղած համընդհանուր նմանությունների հետ, որ ամբողջ մարդկությունը, կարծես, խոսում է մի լեզվով, և միևնույն ժամանակ յուրաքանչյուր մարդ, կարելի է ասել, ունի իր լեզուն» (Вильгельм фон Гумбольдт, О различии организмов человеческого языка и о влиянии этого различия на умственное развитие человеческого рода. Пер. П. Бильярского, СПб, 1859, стр. 46). Հումբոլդտի այդ ձևակերպումը հիմնված է երկու սխալ, էգեալիստական դրույթների վրա: Նախ այն, որ ըստ

ենք, որ լեզուն անվերջ ու անսահման մասերի է բաժանվում, անսահման միավորների մասնատվում. մինչև ամենանվազագույն միավորները — հնչյունները: Լեզուն, այսպիսով, անբիվ ու անհամար մասնակիությունների ամբողջությունն է: Իսկ այդ ամբողջությունը առանձին մասերի ու միավորների մեխանիկական հանրադրումարը չէ: Լեզուն հանդիսանում է մի կուռ համակարգ (սխեմ), մի միասնական ամբողջություն, որի մեջ բոլոր մասերն ու միավորները, բոլոր մասնակիությունները փոխադարձ կապի մեջ են գտնվում միմյանց հետ ու փոխադարձաբար պայմանավորված են միմյանցով: Լեզվական ոչ մի միավոր ինքն իրենով պայմանավորված ինքնարավ կատեգորիա չէ. յուրաքանչյուր միավոր, յուրաքանչյուր լեզվական հնչյուն, արմատ, մասնիկ, բառ և այլն, գոյություն ունի այն անխախտելի կապի մեջ միայն, որով նա լեզվական ընդհանուրի, լեզվական միասնական համակարգի մեջ է մտնում: Այս նշանակում է, որ լեզվարանությունը չի կարող ուսումնասիրել այդ մասնակիությունները իրարից անկախ, ինքնարավ կերպով: Ընդհակառակը, լեզվարանական ուսումնասիրությունը գիտականորեն ճիշտ կարող է լինել այն դեպքում միայն, երբ նա այդ մասնակիություններն ուսումնասիրում է իրենց փոխադարձ պայմանավորվածության ու կապի մեջ, երբ նա այդ մասնակիությունները քննում է իրենց ամբողջության մեջ: Ոչ մի լեզու չի կարելի գիտականորեն ուսումնասիրել առանձին վերցրած. յուրաքանչյուր լեզվի ուսումնասիրություն կարող է գիտական արդյունքի հասնել այն դեպքում միայն, երբ նա ուսումնասիրվում է մյուս լեզուների հետ ունեցած նրա փոխադարձ կապի մեջ: Ի վերջո, լեզուն հասարակական երևույթ է և փոխադարձ կապի ու պայմանավորվածությունների մեջ է հասարակական մյուս երևույթների հետ: Իսկ սրանից հետևում է, որ լեզվի գիտական ուսումնասիրություն համար, լեզվական երևույթները ճիշտ ըմբռնելու և լուսարանելու համար անհրաժեշտ է լեզուն ուսումնասիրել այն կապի ու փոխադարձ պայմանավորվածության մեջ, որ գոյություն ունի նրա ու հասարակության միջև և նրա ու հասարակական մյուս երևույթների միջև:

Վեզուն պատկանում է հասարակության գոյության ամբողջ ժամանակամիջոցում գործող հասարակական երևույթների թվին, — ասում է ընկեր Կոտլինը: Այն ծնվում է զարգանում է հասարակության ծննդի և

չումբողջությամբ, լեզուն ոգու գործունեության արդյունք է, և ինչպես որ, բոլոր նրա պնդման գոյություն ունի քաղաքակրթության, որը դրսևորվում է անհատի մոտ, այնպես էլ գոյություն ունի ընդհանուր լեզու, որ դրսևորվում է անհատների լեզվով: Արկորդ, որ անմիջականորեն բխում է դրանից, չումբողջորդ գտնում է, թե Վեզուն է ասել, որ յուրաքանչյուր մարդ ունի իր լեզուն, և դրանով իսկ միտում լեզվի հասարակական բնույթ: Որ նա հանդում է լեզվի վերհասարակական կամ ոչ հասարակական երևույթ լինելու հակադրության գրություն, ապացուցվում է նաև նրա այն խոսքերով, թե Վեզուն առաջանում է մարդկության ներքին պահանջի հետևանքով և ոչ թե հասարակական փոխհարաբերությունները պահանջելու արտաքին կարիքից միայն: Այդ պահանջն ընկած է մարդկային ոգու բնության մեջ իսկ և անհրաժեշտ պայման է հանդիսանում ոգու ուժերի զարգացման համար... (էջ 11)... Լեզուն կլինի մտածողության անհրաժեշտ պայմանը մարդու համար նույնիսկ նրա մշտական մենություն մեջ (էջ 31): Ինչպես տեսնում ենք, որ միայն լեզուն, այլև մտածողությունը, բոլոր չումբողջությամբ, հասարակությունից դուրս կարող են գոյություն ունենալ: Մինչդեռ ստեղծվել է մարդկանց հասարակական հաղորդակցման համար և հասարակությունից դուրս գոյություն ունենալ չի կարող:

զարգացման հետ միասին: Այն մեռնում է հասարակության մահվան հետ միասին: Հասարակությունից դուրս լեզու չկա: Երա համար էլ լեզուն և նրա զարգացման օրենքները կարելի է հասկանալ միայն այն դեպքում, եթե այն ուսումնասիրվում է անխղճի կապի մեջ հասարակության պատմության հետ, ժողովրդի պատմության հետ, որին պատկանում է ուսումնասիրվող լեզուն և որը հանդիսանում է այդ լեզվի ստեղծողն ու կրողը¹:

Իր ամբողջության մեջ, իր անխախտելի միասնությամբ հանդերձ լեզուն, այնուամենայնիվ, մեկընդմիջ տրված պատրաստի դորձ չէ, նա քարացած երևույթ չէ: Ընդհակառակը, լեզուն հարաշարժ ու հարափոփոխ վիճակում է գտնվում, մշտապես կրկնվում ու անդադար վերարտադրվում է խոսողության պրոցեսում: Լեզուն անընդհատ պրոցես է: Եթե այդպես է, ապա չի կարելի լեզուն ուսումնասիրել որպես մի պատրաստի, ավարտված դորձ, որպես մեկընդմիջ կայուն վիճակ: Լեզվի այդպիսի ուսումնասիրությունը մեզ կտա լեզվի խիստ խեղաթյուրված ըմբռնում: Դա կլինի լեզվի մետաֆիզիկական ուսումնասիրությունը: Լեզուն կարելի է ճիշտ ըմբռնել այն դեպքում միայն, երբ նա ուսումնասիրվում է իր փոփոխման ու զարգացման անընդհատ պրոցեսում, իր գրեթե անսահման, իր անընդհատ վերարտադրության պրոցեսում:

Լեզվի այդ զարգացումը, սակայն, լուրջ քանակական աճ չէ, և ոչ էլ հանկարծակի պայթյուններով կատարվող սրականական անցում: Լեզվի զարգացումը պայթյուններ չունի: Լեզվական յուրաքանչյուր նոր որակի արմատները թաղված են նույն լեզվի պատմության խորքերում, նորի սաղմերը աճում ու զարգանում են հնի մեջ, նրա հետ գիրկընդխառն, մինչև որ նորի սաղմերի աստիճանական կուտակմամբ ու հնի մահացմամբ տեղի է ունենում անցումը նոր վիճակի: Մարքսիզմը գտնում է, — ուսուցանում է մեզ ընկեր Ստալինը, — որ լեզվի անցումը հին որակից նոր որակի, տեղի է ունենում ոչ թե պայթյունի միջոցով, ոչ թե պայթյուն ունեցող լեզուն սննդացնելու և նորն ստեղծելու միջոցով, այլ նոր որակի տարրերի աստիճանական կուտակման միջոցով, հետևաբար, հին որակի տարրերի աստիճանական մահացման միջոցով²:

Լեզուների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ մի լեզու միատարր չէ, բացառապես կատարյալ տարրերից չի կազմված: Յուրաքանչյուր լեզու իր մեջ կրում է և զրական, և բացասական կողմեր, յուրաքանչյուր լեզվի մեջ գոյություն ունեն հնացած, մեռնող երևույթների տարրեր և առաջացող ու զարգացող երևույթների տարրեր:

Նշանակում է, լեզուն ճիշտ ըմբռնելու համար, նրա զարգացումը ճիշտ հասկանալու և լուսարանելու համար պետք է ուսումնասիրել լեզվի զարգացման պրոցեսը, գտնել լեզվի մեջ մեռնողը, հինը, և ցույց տալ սորը, զարգացողը:

Այսպես ուրեմն, վերն ասվածները ցույց են տալիս, որ լեզվաբանությունը մեթոդն է՝ ուսումնասիրել լեզուն իր մասնակիությունների փոխադարձ կապի ու պայմանավորվածության մեջ, ուսումնասիրել լեզուն

¹ Ի. Ստալին, Մարքսիզմի վերաբերյալ լեզվաբանության մեջ, էջ 46, Նրևան, 1950 թ.:

² Նույն տեղում, էջ 60:

իր անընդհատ փափոխման ու դարդացման պրոցեսում, իր մի որակից ղեկի նորը անցնելու պրոցեսում, Այս նշանակում է, որ լեզվաբանության մեթոդը դիալեկտիկական մեթոդն է: Այո, սովետական լեզվաբանության մեթոդը մարքսիստական դիալեկտիկական մեթոդն է և այլ կերպ չի էլ կարող լինել: Մարքս-լենինյան դիալեկտիկական մեթոդը սովետական գիտությունների ճյուղերի մեթոդն է, ըստ որում, յուրաքանչյուր գիտություն այդ ընդհանուր, ղեկավար մեթոդի հետ ունի իր մասնակի մեթոդը կամ գիտական ուսումնասիրության տեխնիկան, որը, բնականաբար, ոչ թե հասկանում է առաջին, այլ հանդիսանում է նրա կոնկրետ գործադրումը տվյալ բնագավառում: Լեզվաբանության մեջ հայտնի են երկու մեթոդներ՝ պատմա-համեմատական և հնէաբանական:

Պատմա-համեմատական մեթոդը ղեկն անցյալ դարում հիմնադրված, այսպես կոչված, պատմա-համեմատական լեզվաբանության մեթոդն է: Նա կոչվում է համեմատական, որովհետև հիմնված է լեզվական փաստերի համեմատական ուսումնասիրության վրա, և կոչվում է պատմական, որովհետև նկատի է առնում ոչ թե լեզուների տվյալ, մի առանձին վիճակը, այլ նրանց ողջ պատմությունը, որքանով այդ հնարավոր է դառնում ուսումնասիրվող լեզվի կամ լեզուների մեջ ավանդված տվյալների միջոցով: Լեզուների ու նրանց փաստական մատերիալի համեմատությունը, սակայն, այս մեթոդի համաձայն, բացարձակ չէ: Պատմա-համեմատական մեթոդի համաձայն համեմատվել կարող են փաստական տվյալները երկու կամ ավելի այնպիսի լեզուների, որոնք պատմականորեն առաջացած ընդհանրություններ ունեն բառապաշարի հիմնական ֆոնդի և քերականության մեջ: Այդպիսի լեզուները, ինչպես հայտնի է, կոչվում են ցեղակից լեզուներ, իսկ ցեղակից լեզուների ամբողջությունը՝ լեզվական ընտանիք: Պատմա-համեմատական մեթոդի նպատակն է վեր հանել այն բոլոր ընդհանրությունները, որոնք գոյություն ունեն ցեղակից լեզուների միջև: Այդպես է վարվել համեմատական լեզվաբանությունը իր հիմնադրման ժամանակից (19-րդ դարի առաջին քառորդից) ի վեր: Այս մեթոդը, որ Ն. Յա. Մառի, ապա և նրա հետևորդները, նրա «Հակերտների» կողմից հայտարարվել էր «իդեալիստական», «հակադիտական», «հակապատմական», «ֆորմալիստական» և այլ վարկերկիչ անուններով, իրականում բոլորովին էլ հակադիտական ու ֆորմալիստական չէ: Մարքսիզմի վերաբերյալ լեզվաբանության մեջ իր հանճարեղ հոգվածում ընկեր Ստալինը միանգամայն պարզորոշ կերպով ցույց է տալիս, որ «... պատմա-համեմատական մեթոդը, չնայած իր լուրջ թերություններին, այնուամենայնիվ, ավելի լավ է, քան Ն. Յա. Մառի իրոք իդեալիստական քառատարր անալիզը...»¹

Ստալինյան այս դրույթը հստակորեն ցույց է տալիս, որ սովետական լեզվաբանությունը պետք է օգտագործի պատմա-համեմատական մեթոդը: Սակայն, միևնույն ժամանակ ընկեր Ստալինը որոշակիորեն շեշտում է այդ մեթոդի լուրջ թերությունների մասին, որոնցից անպայմանորեն պետք է խուսափի սովետական լեզվաբանությունը: Իսկ որոնք են այդ թերությունները, նախ ծանոթանանք այն թերություններին, որոնք նըշ-

¹ Ի. Վ. Ստալին, Մարքսիզմի վերաբերյալ լեզվաբանության մեջ, էջ 71:

վում էին ճնոր ուսմունքի» կողմնակիցների կողմից՝ այդ մեթոդի դրականը ժխտելու համար:

Առաջին և ամենամեծ «թերությունը» ըստ ճնոր ուսմունքի» կողմնակիցների, այն է, որ բուրժուական լեզվաբանությունը, հիմնվելով ցեղակից լեզուների միջև եղած ընդհանրությունների վրա, ամեն ինչ հանգեցնում է նախալեզվի տեսությանը, իսկ նախալեզվի տեսությունն էլ ծառայեցնում է ռասայական ներած տեսությունը «հիմնավորելուն»: Հասկանալի է, որ սովետական լեզվաբանությունը պատմական մատերիալիզմի վրա հենված, հենց նույն պատմա-համեմատական մեթոդի միջոցով հայտնաբերված լեզվական ընդհանրությունների ճշմարտապես գիտական ուսումնասիրությամբ ոչ միայն պետք է լուսաբանի լեզուների իսկական պատմությունը, այլև մերկացնի բուրժուական լեզվաբանության հակադրական էությունը:

Երկրորդ «թերությունն» այն է, ըստ Մառի և նրա հետևորդների, որ բուրժուական լեզվաբանությունը հաճախ համեմատությունները կատարում է ինքնանպատակ կերպով, առանց խորանալու այդ համեմատություններում հայտնաբերված փաստերի գիտական վերլուծության մեջ, առանց ձգտելու պարզել այդ ընդհանրությունների պատմությունը: Մյուս կողմից, այդ ինքնանպատակ համեմատությունները կատարվում են ուսումնասիրվող լեզուներում խոսող ժողովուրդների կամ ազգերի պատմությունից կտրված, մինչդեռ, ինչպես տեսանք, լեզուն չի կարելի գիտականորեն ուսումնասիրել նրանով խոսող հասարակության պատմությունից կտրված:

Այս երկու թերությունն էլ, ինչպես հեշտությամբ կարելի է նկատել, որքան էլ լուրջ, այնուամենայնիվ ոչ թե պատմա-համեմատական մեթոդի թերությունն են, այլ բուրժուական իդեալիստական լեզվաբանության: Մյուս կողմից, բուրժուական լեզվաբանության ներկայացուցիչների մեջ էլ եղել են այնպիսիները, որոնք հենց նույն մեթոդով ուսումնասիրելով լեզուները, պայքարել են ռասայական տեսության դեմ: Ուստի և աշխարհայացքի սխալը վերագրել մեթոդին՝ այն բացասելու համար, նշանակում է աղավաղել իրականությունը, կամ, առնվազն, նույնացնել մեթոդն ու աշխարհայացքը:

Վերջապես իբրև պատմա-համեմատական մեթոդի թերություն նշում են նաև այն, որ հաճախ համեմատությունը ծայրահեղությունների է հասցվում, և չեն պահպանվում այն սկզբունքները, որոնց վրա հիմնված է պատմա-համեմատական մեթոդը: Այսպիսի ծայրահեղությունները նկատի ունենալով՝ Ն. Յա. Մառը և նրա «աշակերտները» պատմա-համեմատական մեթոդը համարել են ֆորմալիստական, մինչդեռ դա ճիշտ չէ: Իհարկե, կան դեպքեր, երբ առանձին լեզվաբաններ չարաչառում են այդ մեթոդը և օգտագործում են ամեն կարգի ճարտարամտություններ հորինելու համար: Այսպես, օրինակ, եղել են մարդիկ, որոնք (օր. Կարստ) հայերեն վիր(ք)յեղանունը համեմատում են մի կողմից հարսնավեր փեսավեր բառերի վեր բաղադրիչի, մյուս կողմից՝ լատիներեն vix «տղամարդ», և երրորդ կողմից իբեր ցեղանվան հետ, ու եզրակացնում, որ հայերեն վիր, վեր, լատիներեն vix բառերը իբեր ցեղանվան հետ միասին ծագում են վեր Ս բեր արմատից, որը նախապես իբր թե նշանակել է ցեղ, Հասկանալի է, որ այս և սրա

նման համեմատութիւնները զիտական արժէք չունեն, ոտովհետեւ դրանց մեջ աչքաթող են արված համեմատովող բառերի իրական իմաստները և միայն ձևական նմանութիւնից ելնելով կարծեցյալ իմաստներ են վերադրված նրանց: Բայց ինչ կապ ունի դա պատմա-համեմատական մեթոդի հետ. այդ մեթոդին տեղյակ ամեն ոք գիտե, որ այդպիսի ճարտարամտութիւնները շատ ավելի համապատասխանում են Մառի քառատարր անալիզին, քան պատմա-համեմատական մեթոդին: Ուստի և այդպիսի դեպքերը նկատի ունենալով համարել այդ մեթոդը ֆորմալիստական, միանգամայն սխալ է: Իսկ թե ինչու Մառն ու նրա «աշակերտները» ֆորմալիստական էին համարում պատմա-համեմատական մեթոդը, շատ պարզ բացատրել է ընկեր Ստալինը. «... ֆորմալիզմը» հորինել են «նոր ուսմունքի» հեղինակները՝ լեզվաբանութեան մեջ իրենց հակառակորդների դեմ մղվող պայքարը հեշտացնելու համար»:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, «նոր ուսմունքի» կողմնակիցների հորինած թերութիւնները, իրականում, պատմահամեմատական մեթոդին չեն վերաբերում, այլ նրա չարաշահողներին: Հետեւաբար, որոնք են պատմա-համեմատական մեթոդի թերութիւնները, որոնց մասին նախազգուշացնում է ընկեր Ստալինը:

Նրա թերութիւնները բխում են նրանից, որ պատմա-համեմատական մեթոդը սահմանափակ է: Այդ սահմանափակութիւնն արտահայտվում է նախ նրանով, որ այդ մեթոդը հնարավորութիւն է տալիս ուսումնասիրելու միայն ցեղակից լեզուների միջև եղած ընդհանրութիւնները: Իրանից իր հերթին բխում է մի կողմից այն, որ ուսումնասիրվում են միայն ընդհանրութիւնները և ստվերի տակ են մնում տարբերութիւնները: Սրանից խուսափել հեշտ է, եթե ուսումնասիրողը ինքն իրեն չի սահմանափակում ընդհանրութիւնների նեղ շրջանակով, եթե նա ձգտում է ուսումնասիրել լեզուն իր ամբողջութեամբ: Չիրանից բխում է, մյուս կողմից, այն, որ ուսումնասիրվելով ցեղակից լեզուների ընդհանրութիւնները, ստվերի տակ են մնում հարեան, ոչ ցեղակից լեզուների միջև եղած ընդհանրութիւնները, որը հանգեցնում է լեզվական ընտանիքների մեկուսացած լինելու անճիշտ տեսակետին: Այս նույնպես հեշտութեամբ կարելի է հաղթահարել, եթե ուսումնասիրողը չտարվի ցեղակցութեան տեսութեամբ և քննութեան առնի լեզուն ոչ միայն ցեղակից, այլև ոչ ցեղակից լեզուների հետ ունեցած փոխադարձ կապի մեջ:

Սահմանափակութիւնն արտահայտվում է, երկրորդ, նրանով, որ պատմա-համեմատական մեթոդը հնարավորութիւն է տալիս վեր հանելու առանձին լեզուների կամ լեզվական խմբերի միջև եղած ընդհանրութիւնները, բայց հնարավորութիւն չի տալիս երեան հանելու բոլոր լեզուների ընդհանուր օրինաչափութիւնները: Հիրավի, այդ պատմա-համեմատական մեթոդի ամենամեծ թերութիւնն է:

Պատմա-համեմատական մեթոդի սահմանափակութիւնը, վերջապես, արտահայտվում է նաև նրանով, որ նա զործադրելի է միայն բանավոր կամ գրավոր ավանդված լեզվական տվյալների առկայութեան դեպքում: Ուր որ դրանք չկան, նա անզոր է: Սա, իրոք, մեծ պակաս է. բայց լեզ-

1 Ի. Ստալին, Մարքսիզմի վերաբերյալ լեզվաբանութեան մեջ էջ, 92—93:

վարանությունը գիտես չի գտել որևէ միջոց այդ բացը լրացնելու համար։ Մառն ուզում էր գրա համար գործադրել քառատարը անալիզի մեթոդը, որը սաղայն հակադրական և իդեալիստական էր։

Այս բոլորը նկատի առնելով, կարելի է եզրակացնել, որ պատմա-համեմատական մեթոդը ունիվերսալ մեթոդ չէ. նա ունի իր գործադրման սահմանափակ բնագավառը և այդ բնագավառի համար նա միանգամայն օգտակար է։ Նրա ճիշտ օգտագործման համար, սակայն, պետք է միշտ հիշել նրա սկզբունքները. լեզվական միավորները (արմատ, բառ, մասնիկ) կարող են համեմատվել այն դեպքում միայն, եթե համեմատությունը հիմնված է մի կողմից ձևի ու բովանդակության համապատասխանության վրա, մյուս կողմից՝ համեմատվող միավորների պատմական կապի վրա։ Հենց այդպիսի սկզբունքների վրա են հիմնված Կ. Մարքսի ու Ֆ. էնգելսի աշխատություններում բերված բաղաժամիվ բառերի համեմատությունները։ Այսպես, օրինակ, Կ. Մարքսը՝ խոսելով արժեք բառի մասին, նրա առաջացումը բացատրելու համար հիանալի կերպով վերլուծում է wert «արժեք» բառի իմաստի զարգացումը՝ օգտագործելով պատմա-համեմատական մեթոդը. «Սանսկրիտերեն wert բառը նշանակում է ծածկել, պաշտպանել, այստեղից՝ հարգել, պատվել և սիրել, զննահատել։ Դրանից ստացվել է wertas ածականը՝ գերազանց, հարգարժան. գոթական wairths բառը, հնդկերեն wert, անդլո-սաքսոնական wearth, vordh, wurth, անգլերեն worthy, հոլանդերեն vaard, waardig, գերմաներեն wert, լիտվաներեն werthas հարգարժան, թանկարժեք, թանկագին. սանսկրիտ լեզվում wertis, լատիներեն virtus, գոթերեն wairthi, գերմաներեն wert.

Իրի արժեքը իրականում նրա սեփական virtus է, մինչդեռ նրա փոխանակային արժեքը բոլորովին կախված չէ նրա իրային հատկություններից։

Սանսկրիտերեն val ծածկել, ամրացնել. լատիներեն vallo, valeo — առողջ եմ, vallus — հենարան, ամրություն. valor դա ինքը ուժն է, որից ֆրանսերեն valeur, անգլերեն value»¹ Խնչպես տեսնում ենք, այստեղ լիովին հաշվի են առնված և ձևի, և բովանդակության համապատասխանությունը և համեմատվող բառերի պատմությունը, հատկապես նրանց իմաստների պատմական զարգացումը։

Արդ, հնարավոր է արդյոք այդպիսի համեմատություններ կատարել. այո, հնարավոր է. վերցնենք պարզագույն օրինակներից մեկը. հայերեն Գևտ բառը կապվում է սանսկրիտի nada «եղեգն», պահյավերեն nad, nai «եղեգն», պարսկերեն nai «եղեգն, սրինգ» և այլ բառերի հետ։ Այստեղ մենք անմիջապես տեսնում ենք, իհարկե, համեմատվող բառերի ձևական նմանությունը՝ հնչյունական համապատասխանությունը, մանավանդ, երբ ելակետ ենք առնում հիշյալ լեզուների պատմական հնչյունաբանությունը։ Սակայն ձևերի այդ համապատասխանությունը մեզ ոչինչ չի ասի, եթե չպարզենք, որ հայերեն Գևտ բառը կապվում է եղեգն նշանակող բառի հետ այն բանի շնորհիվ, որ մի ժամանակ եղեգնը որպես նյութ է ծառայել նետի, ինչպես և սրինգի համար՝ նաև այժմ։ Կարելի է բաղաժամիվ այսպիսի

¹ К. Маркс, Теория прибавочной стоимости, т. III, ч. III, стр. 230—231, прим. 1932.

օրինակներ բերել. բայց էականը օրինակների շատությունը չէ, այլ այն, որ ճիշտ ըմբռնված ու զործադրված համեմատությունը միանգամայն պիտանի է լեզուների դիտական ուսումնասիրության համար: Ավելորդ չէ հիշել, որ Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը ոչ միայն կիրառել են այդ մեթոդը, այլև համարել են 19-րդ դարի լեզվաբանության նվաճումը: Բայց Մաոն, որ պատմա-համեմատական մեթոդը ճշգրտանալու հայտարարել էր իդեալիստական, միանգամայն բացասեց այդ մեթոդը: Նրա «աշակերտներն» էլ հետևելով նրան, և չկարողանալով հասկանալ, որ ինչպես այդ, այնպես էլ ուրիշ շատ հարցերում Մաոն զոհակայնում է մարքսիզմի դրույթները, անվերապահորեն բնդունում էին այդ բացասումը: Մաոն և նրա «աշակերտներին» այդ իդեալիստական դրույթը ջախջախվեց միայն բնկեր Ստալինի հանճարեղ հողվածով, որով պատմա-համեմատական մեթոդը իր արժանի դնահատականն ստացավ:

Իսկ ինչո՞ւ էր փոխարինում Մաոն պատմա-համեմատական մեթոդը: Բր քառատարր անալիզով կատարվող հնէաբանական մեթոդով, կիրառելի է արդյոք Մաոն այդ մեթոդը: Ոչ, կիրառելի չէ: Քառատարր անալիզի մեթոդը ոչ մի դիտական հեմք չունի: Առաջին հերթին, այդ կարգի վերլուծությունները հիմնված չեն բառերի իրական պատմության վրա. նրանք հիմնված են բառերի կամայական մասնատումների և ձևափոխությունների վրա՝ այս կամ այն «լեզվական տարրին» համապատասխանեցնելու համար:

Այնուհետև, քառատարր անալիզը հաշվի չի առնում նաև առանձին լեզուների միջև եղած տարրերությունները, հասկացությունների, բառամասունների դոյադման տարրերությունները՝ տարրեր ցեղերի, ժողովուրդների, ազգերի մոտ, տարրերություններ, որոնք արդյունք են տարրեր լեզուներով խոսող ցեղերի, ժողովուրդների, ազգերի իրական կյանքի առանձնահատկությունների: Ըստ Մաոի, բոլոր լեզուների բոլոր բառերը ծագում են չորս տարրերից, որոնք նախապես նշանակել են ձեռք, ապա՝ երկինք, երկիր, ջուր, կին, ցեղ. իսկ սա նշանակում է անտեսել օրեկտիվ իրականության իրերի ու երևույթների ճանաչման բուն աղբյուրը՝ ամեն ինչ հասկացնելով ձեռք-ին, իսկ մյուս կողմից վերացնել լեզուների միջև եղած տարրերությունները: Ինչպե՞ս կարելի է կին բառը բոլոր լեզուներում ծագած համարել նույն երկինք-ջուր իմաստից, երբ իրականում տարրեր լեզուներում, ինչպես կտեսնենք, կին բառը ամենատարրեր իմաստով բառերից է ծագում: Այսպիսի մոտեցումը անտեսում, սքողում է տարրեր ժողովուրդների մոտ կանկրետ առարկաների հասկացությունների պայման. տարրերությունները, իսկ դրա հետ՝ նաև նյութական կյանքի տարրերությունները: Երկրագործի մոտ պտղաբերության հասկացությունը կապված է հողի, երկրի հետ, մինչդեռ խաշնարածի մոտ նույն հասկացությունը կապված է անասունների հետ. ինչպե՞ս կարելի է, ուրեմն, մտածել, թե պտղաբերություն բառը նշանակում է «երկիր» թե առաջինների, թե երկրորդների մոտ: Ինչպե՞ս կարելի է մոռանալ Կ. Մարքսի այն հանճարեղ խոսքերը, թե իրերի բառային անվանումը «... միայն արտահայտում է այն, ինչ-որ կրկնվող զործունեությունը վեր է ածել փորձի, այսինքն այն, որ որոշ արտաքին առարկաներ մարդկանց (սա խոսքի առկայու-

թյունից անհրաժեշտարար ընող ենթադրություն է) ծառայում են նրանց պահանջները բավարարելու համար: ... Նրանք վերագրում են առարկային օգտակարություն ընդթիմ, որը, իբրև թե, հատուկ է իրեն իսկ՝ առարկային, թեև ոչխարին հագիվ թե իբրև յուր «օգտակար» հատկություններից մեկը պատկերանար այն, որ նա պիտանի է մարդուն որպես կեր»¹ Տարբեր ցեղերի, ժողովուրդների ու ազգերի մոտ և տարբեր ժամանակներում նույն իրը կարող է օգտակար լինել տարբեր ձևով, այսինքն՝ կարող է ունենալ տարբեր դեր ու կիրառություն, որի համաձայն էլ տարբեր լեզուներում նույն առարկայի հասկացությունը տարբեր կլինի: Իսկ Մառը անտեսում էր այդ, անուղղակի կերպով ռեվիզիայի ենթարկելով Մառքսի ու միայն վերը բերված սկզբունքը, այլև այն դրույթը, որ «... թեև ամենազարգացած լեզուներն ունեն օրենքներ ու սրտումներ, որոնք ընդհանուր են ամենից անզարգացած լեզուների համար էլ, բայց այդ ընդհանրականից և ընդհանուրից եղած տարբերությունն է հենց, որ կազմում է նրանց զարգացումը»²:

Վերջապես քառասորը վերլուծությունը հաշվի չի առնում, անտեսում է նաև հնչյունական փոփոխությունների օրինաչափությունները: Ըստ Մառի տեսության, որեւէ հնչյուն կարող է վերածվել ամեն հնչյունի: Ե՞րբ, ի՞նչ պայմաններում, որ լեզվում. Մառի մոտ՝ ժամանակից ու տարածությունից անկախ: Մառն ժրգուհում է՝ հնչյունական օրենքների դրույթները, բայց այդ հնչյունական օրենքները, նրա կարծիքով, չորս տարբերի տարատեսակումների արդյունք են միայն. «... Լեզվի չորս տարբերը,—ասում է նա,—ունեցել են, ստանալով այդպիսիք ժամանակի ընթացքում: Բազմաթիվ օրինաչափ տարատեսակներ, որոնք առաջացել են նրանց, չորս էլեմենտների՝ մարդկանց տեղայնորեն տարբեր սոցիալական խմբերի մեջ առնվելով: Վերջիններիս փոխարարներությունները տնտեսական շահերի միացման կամ փոխադարձ համաձայնեցման հետ հասցրեց, հաղորդակցման սխառմին համապատասխան, հնչյունական լեզվի միավորման կամ համաձայնեցման՝ սկզբից նրան տիրապետող կազմակերպություն, իսկ հետո՝ ամբողջ ժողովրդական մասսայի մասշտաբով, հասցրեց, հետևաբար, այն հնչյունական համապատասխանություններին կամ կորեսպոնդենցիաներին, որոնք կոչվում են հնչյունական օրենքներ»³ Իսկ որոնք են չորս տարբերի այդ տարատեսակությունները: A տարբը, օրինակ, կարող է ունենալ հետևյալ տարատեսակները. ալ, կալ, դալ, տալ, նալ, ցոլ, դուր, կուր, կար. ձար և այլն, և այլն: Նշանակում է, A տարբի ս հնչյունը կարող է դառնալ կ, շ, ն, ց, դ, ց, ձ, խ, զ, փ և այլն: Բայց ինչպիսի՞ օրինաչափություններով: Ակներեւարար ոչ մի. այդ հնչյունական «համապատասխանությունները» փաթաթվում են լեզուներին, երբ նրանց մեջ հարկավոր է դառնել այս կամ այն տարբը՝ որեւէ բառի կազմում: Մինչդեռ, ինչպես հայտնի է, հնչյունական օրենքները հնչյունների պատմական օրինաչափ փոփոխություններն են, որոնք թույլ չեն տալիս կա-

¹ К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. XV, стр. 461—462.

² Կ. Մառ, Քաղաքատնտեսության քննադատության չուրջը, էջ 234, 1948:

³ Н. Я. Марр, Избранные работы, т. II, стр. 96.

մայական, այս կամ այն ուսումնասիրողի զլխում ծագած «փոխանցումներ» կամ «տարատեսակումներ»:

Այսպիսով, Մառի քառատարը վերլուծության մեթոդը իրական հիմքերից զուրկ, ոչ գիտական մեթոդ է, որը «... մղում է լսկ այն բանին, որ պառկեն տաք տեղ և սրճի մրուրի մեջ գուշակություններ անեն տրիս-րահոչակ չորս տարրերի շուրջը»:¹

Վերջապես՝ դադափարական վերլուծության մասին: Այս տերմինը նույնպես հաճախ է պատահում Մառի մոտ՝ նշանակելով ոչ այլ ինչ, եթե ոչ քառատարը վերլուծություն: Բայց մենք, բացարձակապես բացառելով քառատարը վերլուծությունը՝ գտնում ենք, որ իսկական դադափարական վերլուծությունը ոչ մի առնչություն չունի քառատարը վերլուծության, ինչպես և առհասարակ Մառի ոչ մարքսիստական ուսմունքի հետ: Մառն իրականում աղավաղեց այն:

Դադափարական վերլուծությունը նշանակում է բառիմաստի դոյացման օրինաչափությունների լուսաբանություն, և ոչինչ ավելին: Բառերի դադափարական վերլուծությունը նպատակ ունի գտնել, բացահայտել բառերի նախնական իմաստը և զրանով իսկ սահմանել լեզվի ու մտածողության դարդացման տարրեր աստիճաններում, տարրեր լեզուների մեջ ու տարրեր ցեղերի (ժողովուրդների, ազգերի) մոտ հասկացությունների գոյացման ընդհանրություններն ու տարրերությունները: Սա անհրաժեշտ է ոչ միայն լեզվի, այլև մտածողության պատմության ուսումնասիրության համար: Պատմա-համեմատական մեթոդը սահմանափակվում է, ինչպես ասացինք, լեզվական խմբերի շրջանակներով. մինչդեռ դադափարական վերլուծությունը կիրառելի է և՛ մեկ առանձին լեզվի, և՛ լեզվական խմբերի, և՛ միաժամանակ բոլոր լեզուների համար: Եթե պատմա-համեմատական մեթոդի համար անհրաժեշտ սկզբունք է համեմատվող միավորների ձևի և բովանդակության չհամապատասխանությունը, ապա՝ դադափարական վերլուծության համար այդ սկզբունքը կիրառելի չէ. նրա նպատակն է վեր հանել իդեոլոգիական ընդհանրությունը կամ տարրերությունը միևնույն իրերին կամ երևույթներին տրվող անունների իմաստի մեջ և զրանով իսկ պարզել մարդկային ճանաչողության և՛ ընդհանրությունները, և՛ տարրերությունները՝ տարրեր ժամանակներում ու տարրեր ցեղերի, ժողովուրդների, ազգերի մոտ: Այսպես, օրինակ, հայերեն ակն բառը նշանակում է աչք, միաժամանակ՝ նաև արև (արեգակն, ակն արևու). նույնը տեսնում ենք նաև իռլանդերեն լեզվում, սրի Suil «արև» բառը նշանակում և նաև աչք: Այս փաստերի հիման վրա դադափարական վերլուծությունը պարզում է, որ թե հայերենում և թե իռլանդերենում, թեև չունենք համեմատվող բառերի ծագումնաբանական ընդհանրություն (ակն, suil), առկա է արևի և աչքի միատեսակ ըմբռնումը, այսինքն՝ երկու դեպքում էլ և՛ արևը, և՛ աչքը գիտվում են իրրև լույսի աղբյուր: Որ աչքն իրոք կրթնի գիտակցվել է իրրև լույսի աղբյուր, հաստատվում է նաև ռուսերեն ОКО «պատուհան» (տան, սենյակի լույսի աղբյուր, լուսամուտ) բառով, որ ստացվել է ОКО «աչք» բառի ОК-արմատից: Չկերպնենք ուրիշ օրինակ. կից բառը տարրեր լեզուներում տարրեր նախնական իմաստներ

¹ Ի. Ստալին, Մարքսիզմի վերաբերյալ լեզվաբանության մեջ, էջ 71:

է ունեցել, ինչպես, տբնող (գերմաներեն weib), ցերսը մնացող, տանը մնացող (չինարեն 宅女 բառացի՝ ներսի գավակ, աան գավակ), արտադրող, սերող (սանսկրիտ stry), ցուրբ (լատիներեն femina) և այլն։ Սրանց համեմատությունն ու զաղափարական վերլուծությունը ցույց է տալիս, որ կիմ բառի նախնական իմաստների (բնիմաստների) տարբերությունները պայմանավորված են եղել տարբեր ժամանակներում ու տարբեր հանրությունների (տոհմերի, ցեղերի, ժողովուրդների) մեջ կնոջ ունեցած այն հիմնական դերով, որով նա բնորոշվել է հասարակության մեջ։ Այսպես, օրինակ, գերմաներեն weib բառը՝ «տքնող» բնիմաստով, ինչպես և չինարեն 宅女-ն մեղ հիշեցնում են մայրիշխանության ժամանակների երկրագործ-կնոջը, ի տարբերություն որսորդությանը զբաղվող տղամարդու, լատիներեն femina բառը հիշեցնում է հին Հռոմը՝ կնոջ, որպես քնքշանքի ու հաճույքի առարկայի՝ նկատմամբ ունեցած հայացքով, մինչդեռ մի ուրիշ լատիներեն բառ (mulier նախապես՝ «սնող») սանսկրիտի stry (արտադրող) բառի հետ բնութագրում է հասարակության մեջ մոր դերով բնորոշվող կնոջը։

Ինչպես կարելի է հեշտությամբ նկատել, զաղափարական վերլուծությունը հիմնված է բառերի ստուգաբանության վրա։ Սակայն ստուգաբանությունը և զաղափարական վերլուծությունը չեն նույնանում։ ստուգաբանությունը պատմա-համեմատական մեթոդի օգնությամբ պարզում է առանձին բառերի ծագումը՝ թե իմաստային, և թե՛ ձևական տեսակետից։ նա, հետևաբար, տալիս է բառերի պատմությունը։ Գաղափարական վերլուծությունը վերցնում է ստուգաբանության տվյալները և միևնույն առարկայի կամ երևույթի անվան նախնական իմաստների քննությամբ պարզում, թե երբ և որ ժողովրդի մոտ տվյալ առարկան ինչ բնորոշ հատկանիշով է ճանաչվել մարդու կողմից։ Այսպիսով, ստուգաբանությունը զաղափարական վերլուծությունների հիմքն է կազմում։

Մյուս կողմից, ինչպես տեսնում ենք, զաղափարական վերլուծությունը նույնպես կատարվում է համեմատությունների հիման վրա, այն տարբերությամբ, սակայն, որ պատմա-համեմատական մեթոդը գործ ունի միայն ընդհանրությունների, այն էլ ծագումաբանական ընդհանրությունների հետ, մինչդեռ զաղափարական վերլուծության ժամանակ համեմատությունը չի հիմնվում այդպիսի ընդհանրությունների վրա։ Այդ կարգի համեմատություններ կարող ենք կատարել ոչ միայն զաղափարական վերլուծության համար և ոչ միայն բառիմաստների նկատմամբ, այլև լեզվական յուրաքանչյուր միավորի նկատմամբ։ Այսպես, առանձին լեզուների քերականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, օրինակ, հայերենում հոգնակին կազմելու համար բառի հիմքին ավելացնում ենք -եր, -ներ (ծով, ծովեր, այգի, այգիներ), ռուսերենում նույն նպատակի համար կամ դարձյալ որևէ մասնիկ ենք ավելացնում եզակի ուղղականին (стол, столы), կամ փոխում եզակի ուղղականի վերջավորությունը (книга, книги), արաբերենում՝ փոխում ենք բառամիջի ձայնավորները kitab «գիրք» kutub «գրքեր»), ճապոներենում՝ կրկնում բառը (kuni «երկիր» kuni-gunii «երկրներ») և այլն։ Առանձին լեզուների այս տվյալները համեմատելով՝ վերանում ենք նրանց մասնակի զրոստորոշումներից, ու հանգում այն եզրակացության, որ հոգնակին կազմելու համար լեզուներն իրեն միջոց գոր-

ժաղրում են կամ բառի ուղղակի կրկնությունը, կամ մասնիկների ավելացումը, կամ վերջավորության փոփոխումը, կամ արմատական հնչյունների փոփոխությունը և այլն: Այսինքն, այդպիսի համեմատությամբ կարողանում ենք իմանալ, թե ինչ միջոցներ դոյություն ունեն աշխարհի լեզուներում քերականական այս կամ այն իմաստն արտահայտելու համար: Վերջապես այդպիսի համեմատություններ կարելի է կատարել և կատարվում են քերականական կարգերի, հնչյունափոխական օրենքների, բառակազմության, մի խոսքով՝ լեզվական յուրաքանչյուր երևույթի ուսումնասիրության ժամանակ: Հետևաբար՝ այս կարգի համեմատությունները հիմնվելով առանձին լեզուների տվյալների վրա, իրրե միջոց են ծառայում լուսարանելու կամ զտնելու լեզուների մեջ գոյություն ունեցող այս կամ այն երևույթի ծագման, նրա զարգացման ու նրա զրսևորման օրինաչափությունները: Այսպիսի համեմատությունները կարելի է կոչել ընդհանուր համեմատություններ:

Նշանակում է, պատմա-համեմատական և ընդհանուր համեմատական մեթոդներն իրար հակասող կամ իրար բացասող մեթոդներ չեն, այլ մի մեթոդի տարրեր կողմերն են: Նշանք իրար լրացնում են. առանց մեկի մյուսը չի կարող կատարյալ լինել: Առանց պատմա-համեմատական մեթոդի տվյալների, առանց առանձին լեզուների ու լեզվական ընտանիքների քերականության, բառապաշարի, հնչյունաբանության պատմական ուսումնասիրության, հնարավոր չէր լինի ընդհանուր համեմատություններ կատարել, և, ընդհակառակը, առանց ընդհանուր համեմատությունների միջոցով ստացած տեսական եզրահանգումների՝ պատմական համեմատությունները կմնային իրրե սոսկ էմպիրիկ համեմատություններ՝ զուրկ համեմատություններով ձեռք բերված տվյալների տեսական բացատրությունից:

Эд. Агаян

Историко-сравнительный метод и его роль в языкознании

Р е з ю м е

„Язык есть средство, орудие, при помощи которого люди общаются друг с другом, обмениваются мыслями и добиваются взаимного понимания“ (И. Сталин).

Язык, как целое, не выявляется сразу и целиком. Невозможно в процессе одного речевого акта обнаружить все то, чем обладает какой-либо язык. Каждый акт общения—это лишь отдельное применение и проявление языка. Язык становится цельным в бесконечном и непрерывном процессе речевой деятельности общества. В этом процессе каждый отдельный речевой акт является лишь звеном в непрерывной языковой цепи.

Кроме того, каждый отдельный язык, связан с другими языками, и следовательно его нельзя изучать оторванно, вне связи с другими языками.

Наконец, язык—общественное явление и находится во взаимной связи с жизнью общества. Для правильного понимания и освещения языковых явлений необходимо изучать язык „в неразрывной связи с историей общества, с историей народа, которому принадлежит изучаемый язык и который является творцом и носителем этого языка“ (И. Сталин).

Язык находится в состоянии постоянного изменения и развития. Но развитие языка не есть результат взрывов. В языке развитие происходит „путем постепенного накопления элементов нового качества, следовательно, путем постепенного отмирания элементов старого качества“ (И. Сталин).

Следовательно, язык необходимо изучать в его непрерывном движении и развитии.

Методом марксистского языкознания является диалектический метод. Диалектический метод является методом всех областей советской науки, причем наряду с этим общим, руководящим методом каждая наука имеет и свой частный метод или технику (способ) научных исследований. В языкознании до последних времен существовало два таких частных метода—историко-сравнительный и метод четырехэлементного анализа. Первый является методом сравнения языковых фактов в пределах родственных языков. Он служит средством для установления соответствий и выявления общностей между родственными языками. Он имеет свои принципы, а именно: соответствие формы (звуковые законы), соответствие содержания (значение сравниваемых единиц) и историчность. При отсутствии одного из этих принципов сравнение не может быть научно-правильным. Марр и его последователи ошибочно объявили этот метод идеалистическим, отождествляя с ним идеалистическое мировоззрение буржуазных лингвистов.

Серьезным недостатком историко-сравнительного метода является его ограниченность. Поэтому необходимо пользоваться в языковедческих исследованиях методом общих сравнений, при помощи которого можно изучать и выяснять общие закономерности возникновения и развития языковых явлений.

Марр и его „ученики“ считали выдвинутый Марром метод четырехэлементного анализа единственным „материалистическим“ методом. Этот идеалистический метод не имеет никаких научных принципов. Элементный анализ Марра не учитывает ни истории анализируемых единиц, ни их реального содержания, ни звуковых законов. Поэтому он „толкает лишь к тому, чтобы лежать на печке и гадать на кофейной гуще вокруг пресловутых четырех элементов“ (И. Сталин).